Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
հոկտեմբերի 18-ի N 735 - Ա որոշման

# «Սոցիալական կենտրոնի վերանորոգում» ծրագիր

| | | |
|---|---|---|
| **1.** | **Ծրագրի նպատակը** | ՀՀ կառավարության 21 հունվարի 2010 թվականի N 29-Ա որոշմամբ և նշված որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 23 մայիսի 2019 թվականի N 639-Ա որոշմամբ «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպությանը 20 /քսան/ տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված ՀՀ Լոռու մարզի, Ստեփանավան քաղաքի Սայաթ-Նովա 3 հասցեում գտնվող շենքի վիճակի բարելավում՝ ***հիմնանորոգում,*** որը կնպաստի հաշմանդամություն և սոցիալական այլ խնդիրներ ունեցող երեխաներին տրամադրվող ծառայությունների որակի բարձրացմանը, համալիր ծառայությունների տրամադրմանը և թույլ կտա շահառուներին ունենալ ժամանակակից պայմաններին համապատասխան սոցիալական-վերականգնողական կենտրոն:<br>Տարածքը կհանդիսանա «Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցություն վերականգնողական կենտրոն», ինչի շնորհիվ «Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանի համայնքային ցերեկային կենտրոն»-ը /ներկայումս գտնվում է նկուղային հարկում, խոնավ ու անբարվոք վիճակում/ կտեղափոխվի վերանորոգված կենտրոն և հնարավորություն կստանա սպասարկելու Ստեփանավան և Տաշիր քաղաքների և հարակից գյուղերի շուրջ 250 շահառուի:<br>Վերանորոգումը թույլ կտա իրականացնել շահառուների սոցիալական վերականգնում՝ հմտությունների զարգացում, նրանց կարողություններին համարժեք գիտելիքների ձեռքբերում, անկախ և ինքնուրույն կյանք վարելու կարողությունների զարգացում, կրթական, ժամանցային, ճանաչողական միջոցառումների իրականացում:<br>Շնորհիվ այս կենտրոնի՝ |

| | | |
|---|---|---|
| | | Տարեկան յուրաքանչյուր երեխայի անհատական ծրագրում կարձանագրվի գնահատականի դրական աճ (տառաճանաչության, ինքնասպասարկման, հաղորդակցման հմտությունների և այլն):<br>Կհայտնաբերվեն ուսումից դուրս մնացած երեխաները և առաջարկություններ կներկայացվեն պետական և տեղական ինքնակառավարման լիազոր մարմիններին այս ուղղությամբ արդյունավետ աշխատանք կատարելու համար:<br>Կկազմակերպվեն տարեկան առնվազն 4 միջոցառում (երեխայի պաշտպանության օր, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության օր, ժամանցային միջոցառումներ և այլն), որոնք ուղղված կլինեն հանրային իրազեկմանը և երեխաների սոցիալական ներառմանը:<br>Կենտրոնի կողմից մատուցված ծառայությունները համահունչ են ՀՀ կառավարության որդեգրած սոցիալական ներառման և կարողությունների զարգացման քաղաքականությանը, մասնավորապես՝<br>Հասցեական և նպատակային սոցիալական ծառայությունների տրամադրում կարիքների հիման վրա,<br>Ուսումից դուրս մնացած երեխաների հայտնաբերում Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանի բնակչության շրջանում<br>Շուրջօրյա խնամքի հաստատություններ խոցելի խմբերի մուտքի կանխարգելում<br>Բոլոր իրականացվող ծրագրերում ներառականության ապահովում |
| **2.** | **Ծրագրի բարեգործական որակման նպատակը** | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| **3.** | **Բարեգործը** | Նոտարիս Ժան Ժակ Լեկլին՝ Ջինիշյան հիշատակի հիմնադրամի միջոցով (ՀՀ, քաղ. Երևան, Աբովյան 34, բն. 5) |
| **4.** | **Ծրագիրը կատարողը** | «Լիարժեք Կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպություն (իրավաբանական հասցեն՝ քաղ. Երևան, Նորաշեն թաղամաս 36, բն. 121, ՀՎՀՀ՝ 06405487) |
| **5.** | **Ծրագրի իրականացման** | ՀՀ, Լոռու մարզ, քաղ. Ստեփանավան, Սայաթ Նովա 3՝<br>սոցիալական բնագավառ |

| | | |
|---|---|---|
| | **վայրը և բնագավառը** | |
| **6.** | **Ծրագրի բյուջեն** | 14 մլն դրամ |
| **7.** | **Բարեգործություն ստացողը** | ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված հաշմանդամություն և սոցիալական այլ կարգավիճակ ունեցող ավելի քան 60 երեխաներ: |
| **8.** | **Ծրագրի իրականացման տևողությունը** | Նախատեսվում է իրականացնել 2019 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում: |
| **9.** | **Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը** | Համաձայն մասնագիտացված կազմակերպության եզրակացության՝ շենքը գտնվում է անբավարար վիճակում և վնասվածության մակարդակը դասվում է 3-րդ աստիճանի: Ուստի շենքը շահագործելու համար անհրաժեշտ է ամրացում և հիմնանորոգում: Ընդհանուր առմամբ ներդրումները կկազմեն շուրջ 14 մլն դրամ, որը կուղղվի շենքի ամրացման, կտուրի և ներքին հիմնանորոգման, ինչպես նաև շենքի պահպանման աշխատանքներին փուլերով՝<br><br>Գումարը՝ 14 մլն դրամ<br>Ժամանակահատվածը՝ 2019 թվականի հոկտեմբերի 1-ից 2023 թվականի սեպտեմբերի 30-ը<br><br>***Աշխատանքների ծավալը/նկարագիրը***<br><br>Տվյալ ժամանակահատվածում կվերանորոգվի տանիքը, կիրականացվեն շենքի ամրացման աշխատանքները: Ամրացման աշխատանքներից և տանիքի նորոգումից հետո կիրականացվի առաջին հարկի մուտքի, պատուհաների և դռների տեղադրումը, 110 քմ. մակերեսի ներքին հարդարումը, ներառյալ՝ սանհանգույցը, էլ. սնուցումը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը: Այս աշխատանքների իրականացումը թույլ կտա «Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցություն Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանի համայնքային ցերեկային կենտրոն»-ի աշխատանքները 2023 թ-ից իրականացնել այս տարածքում: |
| **10.** | **Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու** | Սոցիալական կենտրոնի վերանորոգման համար նախատեսվում է ձեռք բերել շինանյութ և կատարել շինարարական աշխատանքներ՝ 14 մլն դրամ արժողությամբ, մասնավորապես՝<br>• Շենքի ամրացման աշխատանքներ՝ 5,035,000 դրամ |

| | | |
|---|---|---|
| | **ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը** | • Տանիքի վերանորոգման աշխատանքներ՝ 2,414,300 դրամ<br>• Դռների և պատուհանների տեղադրման աշխատանքներ՝ 1,934,000 դրամ<br>• Հատակների կառուցման աշխատանքներ՝ 1,680,000դրամ<br>• Ներքին հարդարման աշխատանքներ՝ 1,480,000դրամ<br>• Էլեկտրական սնուցման և լուսավորության հետ կապված աշխատանքներ՝ 648,300 դրամ<br>• Ջրամատակարարման և կոյուղու կառուցման աշխատանքներ՝ 418,000 դրամ<br>• Աստիճանավանդակի կառուցման հետ կապված աշխատանքներ՝ 390,400 դրամ |
| **11.** | **Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը** | Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն |
| **12.** | **Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ** | - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>- Լոռու մարզպետարան, Ստեփանավանի քաղաքապետարան<br>- Սոցիալական աջակցության տարածքային գործակալություն<br>- «Լուսաստղ» հասարակական կազմակերպություն, «Աստացոլք» հասարակական կազմակերպություն, «Սպիտակ բազե» հասարակական կազմակերպություն, «Արմավիրի զարգացման» հասարակական կազմակերպություն, «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն, «Առավոտ» հասարակական կազմակերպություն |
| **13.** | **Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը** | Ծրագիրն իրականացնողի կողմից ՀՀ կառավարության 2013 թվականի հունվարի 16-ի թիվ 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազորված մարմնին |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ